



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2018թ. նոյեմբերի 6-ին, N 124
ք.Աշտարակ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 1-ի գրությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 40-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Խաչատրյան Հովիկ» և «Առաքելյան Հունան» բառերը համապատասխանաբար փոխարինել «Առաքելյան Էդվարդ» և «Խաչատրյան Վահրամ» բառերով:

Недействительная подпись



VERIFIED OCSP 11/6/2018 09:59:40 GMT+4

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ